



ԱՄՀ գործադիր խորհուրդը Հայաստանի համար նոր «Պահուստային ծրագիր» է հաստատում

ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

- Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գործադիր խորհուրդը հաստատեց 36-ամյա «Պահուստային ծրագիր» Հայաստանի համար՝ 128.8 միլիոն փոխառության հատուկ իրավունքի (ՓՀԻ) (շուրջ 171.1 միլիոն ԱՄՆ դոլարի) չափով՝ օգնելու մակրոտնտեսական կայունության պահպանմանը, ապահովելու ապահովագրություն նվազման ռիսկերից և օժանդակելու կառուցվածքային բարեփոխումների օրակարգին:
- Հայաստանի իշխանությունները նշել են, որ ծրագիրը դիտարկելու են որպես կանխարգելիչ: Շուկերի հետևանքով վճարային հաշվեկշռի կարիքների առաջացման դեպքում՝ նոր «Պահուստային ծրագիրը» կծառայի որպես ապահովագրություն:
- Ծրագրի հիմքում իշխանությունների կողմից տեղում ձևավորած տնտեսական ծրագիրն է, որի նպատակը ներդրումներով խթանվող, գիտելիքահենք և արտահանմանը միտված տնտեսական աճն է՝ միաժամանակ պահպանելով մակրոտնտեսական, հարկաբյուջետային և ֆինանսական կայունությունը և նվազեցնելով աղքատությունը:

Վաշինգտոն, Կ.Շ. - դեկտեմբերի 12, 2022 թվական. Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գործադիր խորհուրդն այսօր հաստատել է Հայաստանի 36-ամյա «Պահուստային ծրագիրը», որը կազմում է 128.80 ՓՀԻ (շուրջ 171.1 միլիոն ԱՄՆ դոլար կամ ԱՄՀ-ում Հայաստանի քվոտայի մոտ 100 տոկոսը):

Խորհրդի կողմից հաստատումից հետո Հայաստանին անմիջապես հասանելի է դառնում 18.40 միլիոն ՓՀԻ (շուրջ 24.4 միլիոն ԱՄՆ դոլար), իսկ մնացած գումարը կտրամադրվի վեց կիսամյակային ամփոփիչ ստուգումներից հետո:

Հայաստանի իշխանությունները նշել են, որ ծրագիրը դիտարկելու են որպես կանխարգելիչ: Նոր «Պահուստային ծրագիրը» կծառայի որպես ապահովագրություն շուկերի հետևանքով վճարային հաշվեկշռի կարիքների առաջացման դեպքում և կօժանդակի իշխանությունների՝ բարեփոխումներին ուղղված ջանքերին:

Գործադիր խորհրդի կողմից քննարկումից հետո կառավարող տնօրենի տեղակալ և նախագահի ժամանակավոր պաշտոնակատար պրն. Բո Լին արել է հետևյալ հայտարարությունը.

«Հայաստանի տնտեսությունը պահպանել է աճի բարձր տեմպը՝ կայուն սպառման և եկամուտների, կապիտալի և աշխատուժի ներհոսքերի մեծ ալիքի օգնությամբ: Թեև կայուն տնտեսական աճ է կանխատեսվում, ավելացել են նաև գնաճն ու ընթացիկ հաշվի պակասուրդը և Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի, համաշխարհային ֆինանսական պայմանների խստացման և խոշոր առևտրային գործընկերների մոտ տնտեսական աճի տեմպի դանդաղման տարածվող ազդեցություններով պայմանավորված՝ հեռանկարը ենթակա է զգալի անորոշությունների: Նշվածի ֆոնին, իշխանությունների

ծրագիրը՝ «Պահուստային ծրագրի» օժանդակությամբ, որն իշխանությունները նախատեսում են դիտարկել որպես կանխարգելիչ, ձգտում է պահպանել տնտեսական և ֆինանսական կայունությունը և առաջ մղել կառուցվածքային բարեփոխումները կայուն և ներառական աճի խթանման համար:

Իշխանությունների հարկաբյուջետային քաղաքականության շրջանակով ակնկալվում է, որ պարտքը կպահպանվի նվազման ուղու վրա՝ Հայաստանի հարկաբյուջետային կանոնների համաձայն: 2023 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը կշարունակի ուղղված լինել տնտեսությանը հասցեական օժանդակության տրամադրմանը՝ միաժամանակ էլ ավելի ուժեղացնելով հարկաբյուջետային դիմակայունությունը: Միջնաժամկետ հեռանկարում, առաջնահերթ սոցիալական և կապիտալ ծախսերի համար հարկաբյուջետային հնարավորությունների ստեղծմանը կօգնեն հարկային քաղաքականության՝ եկամուտների ավելացմանն ուղղված միջոցառումները և եկամուտների վարչարարության ուժեղացման ջանքերը, ինչպես նաև պետական ծախսերի արդյունավետության բարձրացումը, հանրային ներդրումների կառավարման գործընթացը և հարկաբյուջետային ռիսկերի կառավարումը:

ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը տեղին է և նախաձեռնողաբար նպատակաուղղված գնաձային ճնշումների զսպմանը: Կապիտալի շուկայի զարգացումը խթանող ջանքերը կօգնեն դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը: Փոխարժեքի ճկունության և պահուստային առողջ բուֆերների պահպանման ՀՀ ԿԲ հանձնառությունը կշարունակի արտաքին շուկերի դեպքում լավ ծառայել տնտեսությանը:

Ֆինանսական համակարգն առողջ վիճակում է: Ֆինանսական հատվածի ռիսկերի շարունակական մոնիթորինգը և մակրոպրոդենցիալ գործիքների կատարելագործումը կօգնեն անշարժ գույքի գների և հիփոթեքային վարկավորման կտրուկ աճին առնչվող ռիսկերի մեղմմանը: Վերահսկողական ու վերակառուցման համակարգերի հզորացումը կշարունակի ամրապնդել ֆինանսական համակարգի դիմակայունությունը:

Կառուցվածքային բարեփոխումների կուռ փաթեթի իրականացումը՝ առաջնորդվելով կառավարության 2021–2026 թվականների ծրագրով, կօգնի արտահանմանն ուղղված, ներդրումներով խթանվող և գիտելիքահենք աճին: Բարեփոխումները կնպաստեն ֆինանսների հասանելիության, աշխատուժի մասնակցության աստիճանի մեծացմանը և առևտրի բազմազանեցմանը»:

Աղյուսակ 1. Հայաստան.Տնտեսական և ֆինանսական ընտրված ցուցանիշներ, 2019–2027 թվականներ

	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026	2027
	Փաստ.	Փաստ.	Փաստ.	Կանխատեսում					
Ազգային եկամուտներ և զներ									
Իրական ՀՆԱ (տոկոսային փոփոխություն)	7.6	-7.2	5.7	11.0	4.5	4.5	4.5	4.5	4.5
Սպառման ծախսեր, նպաստ.աճին	10.7	-10.5	4.0	12.2	2.5	2.4	2.2	2.0	1.9
Համախառն հիմն.կապիտալի կուտակում, նպաստ.աճին	0.7	-0.2	1.1	2.5	2.5	2.6	2.7	2.8	3.0
Նյութական շրջանառու միջոցների փոփոխություն, նպաստ.աճին	-3.9	0.1	0.7	-2.1	0.0	0.0	0.0	0.0	0.0
Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում, նպաստ. աճին	0.1	3.4	-0.2	-1.7	-0.5	-0.5	-0.4	-0.3	-0.3
Համախառն ներքին արդյունք (միլիարդ դրամ)	6,543	6,182	6,983	8,294	9,186	10,023	10,893	11,816	12,810
Համախառն ներքին արդյունք (միլիոն ԱՄՆ դոլար)	13,619	12,642	13,861	18,583	20,648	22,225	23,829	25,526	27,382
Համախառն ներքին արդյունք՝ մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	4,597	4,269	4,679	6,273	6,969	7,501	8,042	8,614	9,239
ՄԳԻ (ժամանակահատվածի միջին, տոկոսային փոփոխություն)	1.4	1.2	7.2	8.8	7.5	5.1	4.5	4.2	4.1
ՄԳԻ (ժամանակահատվածի վերջ, տոկոսային փոփոխություն)	0.7	3.7	7.7	10.0	6.0	4.5	4.0	4.0	4.0
ՀՆԱ դեֆլյատոր (տոկոսային փոփոխություն)	1.0	1.8	6.9	7.0	6.0	4.5	4.0	3.8	3.7
Գործազրկության մակարդակ (տոկոսով)	18.3	18.2	15.3	14.8	14.7	14.6	14.5	14.4	14.3
Ներդրումներ և խնայողություններ (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ)									
Ներդրումներ	17.4	19.7	20.7	22.6	23.3	23.6	23.9	24.2	24.4
Ազգային խնայողություններ	10.1	15.9	17.0	17.0	17.8	18.2	18.5	18.9	19.4
Փող և վարկ (ժամանակահատվածի վերջ) (տոկոսային փոփոխություն)									
Փողի բազա	8.8	18.3	17.1	6.2	4.4	11.2	10.7	5.2	6.1
Փողի զանգված	11.2	9.0	13.1	11.8	10.2	12.0	9.7	7.5	7.6
Մասնավոր հատվածի վարկավորման աճ	18.5	14.3	-3.9	3.0	4.0	5.3	5.3	5.0	4.9
Կենտրոնական կառավարության գործառնություններ (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ, եթե այլ բան նշված չէ)									
Եկամուտներ և դրամաշնորհներ	23.9	25.2	24.1	24.6	24.7	25.0	25.3	25.5	25.9
Որից՝ հարկային եկամուտներ	22.1	22.0	22.1	22.4	22.8	23.1	23.4	23.6	23.9
Ծախսեր	24.9	30.6	28.7	27.0	27.7	27.5	27.3	27.0	26.9
Ընդհանուր հաշվեկշիռը՝ դրամարկղային հիմունքով	-1.0	-5.4	-4.6	-2.5	-3.0	-2.5	-2.0	-1.5	-1.0
Պետական և պետության կողմից երաշխավորված	53.7	67.4	63.4	55.3	53.9	52.4	51.1	49.7	48.3
Կենտրոնական կառավարության ՊՊԵ պարտք	50.1	63.5	60.3	51.3	50.0	48.7	47.8	47.1	46.3
Արտարժույթային պարտքի մասնաբաժին (տոկոս)	80.6	77.0	72.6	67.7	65.4	63.6	61.8	60.6	59.9
Արտաքին հատված (միլիոն ԱՄՆ դոլար, եթե այլ բան նշված չէ)									
Ապրանքների և ծառայությունների արտահանում	5,794	3,818	5,012	7,786	8,525	9,034	9,533	10,117	10,743
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-7,603	-5,082	-6,120	-9,244	-10,080	-10,660	-11,252	-11,905	-12,579
Ապրանքների և ծառայությունների արտահանում (տոկոսային փոփոխություն)	17.6	-34.1	31.3	55.3	9.5	6.0	5.5	6.1	6.2
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (տոկոսային փոփոխություն)	13.8	-33.2	20.4	51.0	9.1	5.8	5.6	5.8	5.7

Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ)	-7.3	-3.8	-3.7	-5.6	-5.5	-5.4	-5.4	-5.3	-5.0
ՕՈւն (զուտ)	233	86	342	649	376	470	541	562	579
Համախառն միջազգային պահուստներ	2,850	2,616	3,230	3,746	3,547	3,491	3,377	3,262	3,178
Ներմուծման ծածկույթ 1/	6.7	5.1	4.2	4.5	4.0	3.7	3.4	3.1	2.9
Ժամանակահատվածի վերջի փոխարժեք (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	480	523	480	...	...	...	...	...	...
Միջին փոխարժեք (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	480	489	504	...	...	...	...	...	...

Աղբյուրները՝ Հայաստանի իշխանություններ և ԱՄՀ աշխատակազմի գնահատականներ և կանխատեսումներ:

1/ Համախառն միջազգային պահուստներն՝ ըստ ապրանքների և ծառայությունների ներմուծման հաջորդ տարվա ամիսների, այդ թվում՝ պահվող ՓՀԻ: